ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ (ՕՖԵՐՏԱՅԻ) ՄԱՍԻՆ

TELCELL
TERMINAL

Հավելված

«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության

գլխավոր տնօրենի 30 հուլիսի 2026թ. թիվ 32-Լ հրամանի

1. Հիմնական հասկացություններ

1.1. Օֆերտա - «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի տերմինալների միջոցով վճարումներ կատարելու հրապարակային առաջարկ՝ հասցեագրված ցանկացած անձի:

1.2. Ակցեպտ - Հաճախորդի կողմից պայմանագրի պայմանների լրիվ և անվերապահ ընդունում:

1.3. Ծառայություն մատուցող - կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, որը «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի հետ կնքել է համապատասխան պայմանագիր:

1.4. Վճարող - ծառայություններ մատուցող(ներ)ի օգտին վճարումներ կատարող՝ սույն Պայմանագրի պայմանների համաձայն:

1.5. Վճար – Վճարողից համապատասխան դրամական հատուցում ստանալու պայմանով՝ Ծառայություններ մատուցող(ներ)ի օգտին կատարվող վճար (մատուցված ծառայությունների դիմաց):

1.6. Տերմինալ - ավտոմատ ինքնասպասարկման սարքավորում, որի միջոցով ընդունվում են կատարված վճարումները:

1.7. Նույնականացում – Տերմինալի էկրանին արտացոլված տեխնոլոգիական գործիքի (QR կոդի, Push ծանուցման կամ բանկային քարտի և այլ միջոցներ) միջոցով Վճարողի (Գործարք կատարողի) ինքնության հավաստման/նույնականացման գործընթաց:

1.8. MY Telcell անձնական էջ – Տերմինալում Վճարողի նույնականացման (QR կոդի, Push ծանուցման կամ բանկային քարտի կամ այլ տեխնոլոգիական գործիքի միջոցով) արդյունքում ձևավորվող անհատականացված տիրույթ, որտեղ API ինտեգրման միջոցով արտացոլվում են Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից փոխանցված Վճարողի տվյալները (մասնավորապես՝ քարտերի համարներ, հաշվեհամարներ, վարկային կոդեր): Այն հաճախորդին հնարավորություն է տալիս տերմինալի էկրանին ընտրել անհրաժեշտ վճարման տեսակը կամ ծառայությունը, ստեղծել և կառավարել վճարումների խմբեր, «Ընտրյալներ» բաժնում պահպանել ու արագ և հարմարավետ կերպով իրականացնել պարբերական կամ հաճախակի օգտագործվող վճարումները:

1.9. **Անձը հաստատող տվյալներ** – Անուն և ազգանուն, հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ), անձը հաստատող փաստաթղթի տվյալներ:

1.10. **Բանկային տվյալներ** – Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության տեղեկատվական համակարգերում առկա և հասանելի՝ Վճարողի վերաբերյալ այն տեղեկությունների ամբողջությունը, որոնք API ինտեգրման միջոցով փոխանցվում են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ին «MY Telcell» անձնական էջի ձևավորման համար, մասնավորապես՝ Օգտատիրոջ բանկային քարտերի համարները, հաշվեհամարները և վարկային կոդերը (վարկային պայմանագրերի ծածկագրերը):

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն **Պայմանագիրը** հանդիսանում է հրապարակային օֆերտա (այսուհետ՝ օֆերտա)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի:

2.2. **Օֆերտան** արտահայտում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ին պատկանող տերմինալների միջոցով սույն Պայմանագրում նշված պայմաններով կատարված յուրաքանչյուր վճարում ընդունելու ընկերության կամքը և պարունակում է Պայմանագրի բոլոր էական պայմանները:

2.3. **Նախքան տերմինալի միջոցով վճարում կատարելը Վճարողին անհրաժեշտ տեղեկատվություն.**

2.3.1. ընձեռվում է վճարման հնարավորություն՝ հօգուտ այն ծառայություններ մատուցողների, որոնք ներկայացված են տերմինալի մոնիտորին,

2.3.2. վճարողն ունի ծառայություններ մատուցողների ընտրության հնարավորություն,

2.3.3. տրամադրվում է տերմինալից օգտվելու պարզ և մատչելի ուղեցույց,

2.3.4. ապահովվում է բաժանորդների հաշիվների մասին անհրաժեշտ լիարժեք տեղեկատվություն (ոչ բոլոր ծառայություններ մատուցողների վերաբերյալ),

2.3.5. ապահովվում է կատարված վճարման (գործարքի) փաստաթղթային հաստատում՝ անդորրագրի տրամադրմամբ,

2.3.6. վճարողն իր ցանկությամբ կարող է աջակցություն ստանալ տերմինալից օգտվելու, կատարած սխալ գործողությունները շտկելու հարցում,

2.3.7. վճարելիս գանձվում են միջնորդավճարներ, որոնց չափը յուրաքանչյուր տերմինալում նշված է յուրաքանչյուր վճարի համար՝ կոնկրետ ծառայություն մատուցողի վերաբերյալ:

3. Վճարողի գործողությունները

3.1. Telcell տերմինալի միջոցով հոգուտ ծառայություններ մատուցողի վճարում կատարելը կամ «MY Telcell» անձնական էջ մուտք գործելը համարվում է Վճարողի կողմից «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ հրապարակային առաջարկի **(օֆերտա)** լիարժեք և անվերապահ ընդունում **(ակցեպտ)**՝ այդ ուղղությամբ գործողությունների կատարմամբ, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի: Տերմինալի միջոցով վճարում կատարելու յուրաքանչյուր փաստ առանձին գործարք է, որն իրականացվում է՝ օֆերտայում նշված պայմանների համաձայն:

3.2. Վճարողը պարտավոր է ուսումնասիրել և հետևել տերմինալի շահագործման ուղեցույցին: Վճարողի կողմից ուղեցույցով չնախատեսված գործողություններ կատարելը կարող է դառնալ վճարումը չընդունելու հիմք: Պայմանագրի պայմաններին չհամաձայնելու կամ ուղեցույցի պահանջները չհասկանալու դեպքում Վճարողն իրավունք չունի օգտվել տերմինալից: Վճարողն իրավունք ունի զանգահարել «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ՝ 060 272222 հեռախոսահամարով, և ստանալ վճարումը կատարելու համար անհրաժեշտ պարզաբանումներ ու տեղեկատվություն:

3.3. Վճարողը պարտավոր է պահպանել վճարման դիմաց տրամադրված անդորրագիրը:

3.4. Վճարողն ընդունում և գիտակցում է, որ ՓԼ/ԱՖ օրենսդրության պահանջներից ելնելով՝ տերմինալներով իրականացվող որոշակի տեսակի և/կամ սահմանաչափի գործարքներ հնարավոր է կատարել բացառապես գործարքը կատարող անձին նույնականացնելուց հետո:

3.5. Կախված ընտրված նույնականացման տարբերակից՝ Գործարք կատարողը տալիս է իր համաձայնությունը՝ իր անձը հաստատող/նույնականացնող տվյալները «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի կողմից տվյալ տեղեկատվությունը փոխանցող անձանցից/մարմիններից ստանալու և Գործարք կատարող անձին նույնականացնելու համար: Մասնավորապես՝ Վճարողին նույնականացնելու նպատակով «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն կարող է համապատասխան տեղեկատվություն ստանալ Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություններից, այդ թվում՝ առևտրային բանկերից՝ Վճարողի բջջային հավելվածին հաստատման հարցում ուղարկելու միջոցով (QR կոդի սկանավորման, push (փուշ) ծանուցման և այլ տեխնոլոգիական գործիքների միջոցով), կամ բանկային քարտի կիրառման եղանակով:

3.6. My Telcell անձնական էջ մուտք գործելու և/կամ տերմինալի միջոցով դրանից օգտվելու համար Գործարք կատարող անձը տալիս է իր համաձայնությունը իր բանկային և անձը հաստատող տվյալները մշակելու համար (կատարված բոլոր գործարքների վերաբերյալ տվյալները My Telcell անձնական էջում հավաքագրելու, արտացոլելու և պահպանելու համար):

4. Ծառայությունների արժեքը

4.1. Ծառայությունների արժեքը սահմանում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն՝ Վճարողի և ծառայություն մատուցողին ուղղված վճարի տոկոսային հարաբերակցությամբ կամ հաստատուն գումարի չափով, որը տերմինալի միջոցով տեղեկացվում է Վճարողին՝ տերմինալից օգտվելիս, նախքան վճարման մասին նրա որոշում ընդունելն ու կատարելը:

4.2. Ծառայությունների կատարման և վճարման փաստը հաստատվում է վճարման վերաբերյալ տրամադրված անդորրագրով:

5. Հատուկ պայմաններ

5.1. «Թել-Սել» ԲԲԸ-ն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել իր կողմից մատուցվող ծառայությունները:

5.2. «Թել-Սել» ԲԲԸ-ն պատասխանատվություն չի կրում ոչ իր մեղքով առաջացած՝ Վճարողի վնասի համար: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն պատասխանատվություն չի կրում ծառայությունների մատուցման լրիվ կամ մասնակի ընդհատումների համար, որոնք առնչվում են սարքավորումների կամ ծրագրային ապահովման փոխարինմանը կամ այլ աշխատանքներին՝ ծրագրերի կամ սարքավորումների աշխատունակության պահպանման կամ արդիականացման նպատակով:

5.3. Վճարողն իրավունք ունի վճարումից (գործարքից) բխող դիմում-բողոքները ներկայացնել «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ին, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին: Պահանջն ընդունելու, քննելու և որոշում կայացնելու կապակցությամբ Ֆինանսական համակարգի հաշտարարը հաճախորդից որևէ վճար չի գանձում: Մանրամասն տեղեկատվությունը բերված է վեճերի լուծման բացատրական ամփոփագրում, որին կարող եք ծանոթանալ «Թել-Սել» ԲԲԸ պաշտոնական կայքում՝ www.telcell.am:

5.4. Սույնով հայտնում ենք, որ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ չի կնքել վերջինիս որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:

5.5. «Թել-Սել» ԲԲԸ-ն կարող է փոփոխել վճարումների ընդունման ծառայությունների մատուցման պայմանները, որոնք ներկայացվում են ի գիտություն Հաճախորդին (Վճարողին)՝ մինչև վճարում կատարելու պահը, յուրաքանչյուր տերմինալի միջոցով:

5.6. Սույնով Վճարողը տալիս է իր համաձայնությունը՝ առ այն, որ «Թել-Սել» ԲԲԸ-ին իրավունք է վերապահում վճարների և «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի մատուցած ծառայությունների վերաբերյալ իր բջջային հեռախոսահամարին ուղղարկել համապատասխան SMS հաղորդագրություն:

5.7. Սույնով Վճարողը տալիս է իր համաձայնությունը՝ առ այն, որ Վճարումը կատարելիս իր կողմից մուտքագրված տվյալները լրիվ կամ մասնակի տրամադրվելու են վճարումը ստացող կողմին:

5.8. Սույն օֆերտայի ակցեպտավորմամբ Վճարողը տալիս է իր անվերապահ համաձայնությունը, որ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ) երրորդ անձանցից ստանա Վճարողի վերաբերյալ տեղական և ինքնակառավարման մարմիններին պատկանող տվյալների բազաներում պահպանվող ցանկացած անձնական տվյալ և մշակի այն՝ Վճարողի կողմից խնդրարկվող գործարքը կատարելու համար: Վճարողը ի գիտություն ընդունում է, որ անձնական տվյալների մշակումն իրականացվում է Ծառայությունների մատուցման ընթացքում և դրանից հետո, անձնական տվյալները պահպանվելու են և կարող են փոխանցվել երրորդ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, Վճարողը ցանկացած պահի կարող է պահանջել կատարել հարցված անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.9. Սույն պայմանագրի՝ այլ լեզուներով ներկայացված տարբերակների և հայերեն տարբերակի միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

6. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ վավերապայմանները

Անվանում՝	«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հարկային հաշվառում՝	02703102
Վեբ-կայք՝	www.telcell.am
Էլ. հասցե՝	info@telcell.am
Հեռախոս՝	+374 (60) 27-22-22